5865

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«22» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 147 - 25

Նախաձեռնող՝ ***«Մոդուլ» ՍՊԸ***
ք. Երևան, Նաիրի Զարյան 22-3

Գործունեությունը՝ ***Ակունք համայնքի Զառ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 147 - 25
«22» Մայիսի 2025թ.

Զառ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Մոդուլ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Կատեգորիա՝	Բ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Զառ բնակավայր

Ներածական մաս. «Մոդուլ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Զառ բնակավայրի վարչական տարածքում կառուցել միջնակարգ դպրոց (հզորությունը՝ 288 աշակերտ):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Ակունքի համայնքապետարանի կողմից տրամադրված 2025թ. մարտի 14-ի N ՆԹ-1338-25 նախագծման թույլտվության հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով պետական սեփականություն հանդիսացող 1.28555 հա հողամասի սահմաններում (ծածկագիր՝ 07-027-0037-0038), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նկարագրական մաս. Նախատեսվող միջնակարգ դպրոցի համար դիտարկվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Զառ բնակավայրի Պ. Հարությունյան փողոց 1 հասցեում: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Զառ գյուղի հարավ-արևմտյան եզրին:

Դպրոցը տեղադրվելու է հյուսիս-արևմտյան ուղղությամբ, իսկ մուտքային հանգույցը՝ հարավ-արևելյան տեղադիրքով: Հարակից բնակելի կառուցապատման նշանակությամբ հողամասերի հեռավորությունը կազմում է 25.0-60.0 մ, որոնք բաժանված են փողոցային ցանցով: Արևմտյան թևում առկա է վարելահողի նշանակությամբ համայնքային հողամաս:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է Գեղամա լեռների հարավ-արևմտյան էրոզիոն լանջերի ստորոտային մասում, Հատիս լեռան հարավային լանջի ստորոտում: Բացարձակ բարձրությունը տատանվում է 1588.6-1592.8 մ սահաններում: Ռելիեֆը հարթ է, բլրաձև, մակերևույթի ընդհանուր թեքությամբ արևելքից արևմուտք:

Տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է չորրորդական հասակի անդեզիտաբազալտներով, անդեզիտներով, որոնք ծածկված են ժամանակակից էլուվիալ,

դելուվիալ, ալուվիալ-պրոլուվիալ կավային, ավազային, խճա-խճավազային գոյացումներով: Տեղամասը գնտվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax=0.4g արագացումով: Վտանգավոր ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ, հետազոտությունների արդյունքում ստորերկրյա ջրերի հորիզոններ փորվածքներում չեն բացահայտվել:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքում բնության և (կամ) պատմամշակութային հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ, ՀՀ Կարմիր գրքերում բույսեր և կենդանիներ գրանցված չեն:

Միջնակարգ դպրոցի կառուցման նպատակն է անվտանգ, բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, նոր չափորոշիչներով Շենքի կառուցումը:

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- ✓ հողամասի ընդհանուր մակերես - 0.1285 մ²,
- ✓ կառուցապատման մակերես - 2916. 9 մ²,
- ✓ անջրանցիկ մակերես՝ ասֆալտապատում - 3565,3 մ²,
- ✓ անջրանցիկ մակերես՝ սալվածք - 1507,4 մ²,
- ✓ ինժեներական ենթակառուցվածքներ – 71,0 մ²,
- ✓ կանաչապատման մակերես – 4018,7 մ²,
- ✓ պարսպի երկարություն - 494.7 գծ.մ,
- ✓ դպրոցի հզրությունը - 288 աշակերտ / 12 դասարան / 8 կաբինետ /:

Դպրոցի կառույցը տեղադրվելու է գրեթե հարթ հողամասի վրա: Դպրոցը նախագծված է չորս մասնաշենքով:

Առաջին մասնաշենքը հատակագծում ունի ուղղանկյուն ձև և 27,6x20,0 մ առանցքային չափեր: Եռահարկ է, չունի նկուղային հարկ: Մասնաշենքում տեղադրվելու են տարրական դասարանները, շախմատի դասարանը, ներառական կաբինետը, մարզասրահ-խաղասենյակը և այլն:

Երկրորդ մասնաշենքը /կենտրոնական/ եռահարկ է: Առաջին հարկում ներառվել են մուտքային հարթակը՝ թեքուղիներով, նախասրահը, հանդիսությունների դահլիճը, ճաշասրահը, կենտրոնական աստիճանը, տնօրենի աշխատասենյակը, մեկ վերելակ: Երկրորդ հարկում՝ ուսմասվարների /միջին և տարրական դասարաններ/ աշխատասենյակները և կաբինետներ: Երրորդ հարկում տեղադրվելու է գրադարանը, այլ կաբինետներ և լինգաֆոնային կաբինետը: Կիսանկուղային հարկում տեղադրվելու է ճաշարանի խոհանոցը՝ իր օժանդակ սենքերով:

Երրորդ մասնաշենքը՝ միջին և ավագ դպրոցն է, որը հատակագծում ունի 29.4x20.0 մ չափեր: Մասնաշենքը եռահարկ է, մի հատվածում՝ երկհարկանի: Այստեղ են գտնվում քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության կաբինետները: Նկուղային հարկում՝ հրաձգարան, սանհանգույցներ և օժանդակ տարածքներ:

Չորրորդ մասնաշենքը /մարզադահլիճ/ հատակագծում ունի ուղղանկյուն ձև և 26.0 x15,7 մ առանցքային չափեր: Մեկ հարկանի է՝ մարզական գույքի սենյակով: Նկուղայինն հարկ չունի:

Ուսումնական բոլոր մասնաշենքերն իրարից բաժանված են հակասեյսմիկ կարաններով:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բացօդյա մարզադաշտ և մարզահրապարակ:

Դպրոցի ջրամատակարարումը իրականացվելու է գոյություն ունեցող ջրագծից: Շենքում նախագծվել է սառը, տաք ջրամատակարարման, ջրահեռացման և տանիքի անձրևաջրերի հեռացման ցանցեր:

Ջերմամատակարարումն իրականացվելու է տարածքում կառուցվող կաթսայատնից՝ բնական գազով: Ջերմության ընդհանուր հաշվարկային ծախսը կազմում է $Q_{ընդ.}$= 422564.0 կկալ/ժ: Կաթսաները համալրված են ավտոմատացված կառավարման այրիչներով:

Դպրոցի տարածքում նախատեսվում է նաև տրանսֆորմատորային ենթակայան ի կառուցում: Տրանսֆորմատորային ենթակայանում վթարային արտահոսքի դեպքում յուղի ներթափանցումը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով կիրառվելու են Հաշվետվությամբ նախատեսված միջոցառումներ:

Ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին՝ նախատեսվող գործունեության իրականացման համար տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Տարածքում կոյուղու համակարգի բացակայության պատճառով տեղադրվելու է կեղտաջրերի մաքրման կոմպակտ կայան՝ 15ն մ³/օր արտադրողականությամբ: Ջրահեռացման համակարգը նախատեսված է տարածքի կեղտաջրերը ներտարածքային ցանցով հեռացման համար:

Դպրոցի տանիքին տեղադրվելու է 119.88 կՎտ (2594 մ²) դրվածքային հզորության արևային ֆոտովոլտային համակարգ՝ բաղկացած 4 ենթակայաններից, կազմված 216 հատ արևային մոդուլներից, յուրաքանչյուրը՝ 555 Վտ: ԱՖՎԿ-ի զբաղեցրած մակերեսը կազմում է 558.22 մ², իսկ տարածքի մնացած մասը՝ 2035,78 մ², ծառայելու է ենթակառուցվածքների սպասարկման և ստվերների ազդեցությունից խուսափելու համար՝ կախված կայանի աշխարհագրական դիրքից:

ՖՎ վահանակների վնասման կամ ոչ պիտանի դառնալու դեպքում ուտիլիզացման շախատանքները կազմակերպվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների միջոցով՝ պահպանելով սահմանված նորմատիվային պահանջները:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովման նպատակով նախատեսվում է ջերմամեկուսացնող նյութերի կիրառում, ինչպես նաև էներգախնայող սարքեր: Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են միջոցառումներ (թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն):

Դպրոցն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով, էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով, ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էվակուացիոն ուղիներով և ելքերով և այլն:

Շինարարության տևողությունը կազմելու է 24 ամիս:

Շինարարության ընթացքում տեխնիկա-տրնասպորտային միջոցներից օգտագործվելու են թրթուրավոր էքսկավատոր, ավտովերհան, բետոնախառնիչ, ավտոինքնաթափ, ձեռքի գործիքներ և այլն: Հողային և ջրային ռեսուրսների պահպանության նպատակով շինտեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու են շինհրապարակից դուրս մասնագիտացված սպասարկման կետերում: Շինհրապարակի մուտքերը և ելքերն ապահովող 2 դարպասների մոտ տեղադրվելու է մեքենաների անիվները լվանալու հարթակ:

Շինանյութերից օգտագործվելու են ավազ, խիճ, կոպիճ, ցեմենտ, գիպս, կիր, բետոնախառնուրդ, բենզին և այլն: Վտանգավոր նյութերի կիրառում չի նախատեսվում: Շինանյութերը պահեստավորվելու են, իսկ բաց տարածքներում տեղադրվելու են տակդիրների վրա: Անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով՝ մասնագիտացված ընկերության կողմից:

Շինարարության և շահագործման փուլերում առաջացող հոսքաջրերի կառավարման և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցության բացառման նպատակով շինհրապարակում տեղադրվելու է անջրաթափանց փոքր ծավալի տարողություն, որը ծառայելու է որպես պարզարան: Մեխանիկական նստեցման արդյունքում պարզեցված ջուրն օգտագործվելու է ըստ անհրաժեշտության, իսկ հատակային նստվածքները հեռացվելու են որպես շինաղբ:

Տարածքի հարթեցման և հիմքերի փորման աշխատանքներից առաջացող ընդհանուր հողային հանույթից հետլիցքի ենթակա հողային զանգվածը (6480.6 մ³) կպահեստավորվի, փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան: Կանաչապատման նպատակով 2332.4 մ³ ծավալով հողի բերրի շերտի հանումը, պահպանումը, պահեստավորումն իրականացվելու է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Շինարարության փուլում հիմնական թափոնատեսակը կենցաղային չտեսակավորված աղբն է (բացառությամբ խոշոր եզրաչափերի՝ 670 մ³) և շինարարական աղբն է (150 մ³): Առաջանալու են նաև այլ թափոններ, մասնավորապես՝ սև և գունավոր մետաղի ջարդոններ, ավազ, մանրախիճ և այլն: Շինարարական աղբը, այդ թվում փորման աշխատանքների ընթացքում վտանգավոր նյութերով չաղտոտված հողային զանգվածը (տարածքի հարթեցում՝ 3970.4 մ³ և փոսորակների քանդում՝ 3970.4 մ³), տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և հեռացվելու է պայմանագրային հիմունքներով՝ բացառելով տարածքում աղբի կուտակումը և այրումը:

Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի / հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում՝ հրդեհաշիջման համար: Անհրաժեշտ խմելու-կենցաղային և տեխնիկական ջրի ապահովումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված կազմակերպությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Հաշվետվությամբ նախատեսված բնապահպանական միջոցառումների իրականացման միջոցով՝ շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շինհրապարակում աշխատողների սանիտարահիգիենիկ պայմաններն ապահովելու են համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանի համաձայն:

Շինաշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումն իրականացվելու է Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշմանը համապատասխան՝ համաձայնեցված Ակունքի համայնքապետարանի հետ: Ոռոգումն իրականացվելու է ցնցուղային եղանակով: Օգտագործվելու են ռետինե խողովակներ՝ ոռոգումն ամբողջությամբ կազմակերպելու համար:

Կառուցապատման աշխատանքների ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Մշակվել են համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու / նվազեցնելու նպատակով:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության (դպրոցի կառուցում) փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Կոտայքի մարզպետարանը, Ակունքի համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Գնահատման և փորձաքննության փուլերում օրենսդրությամբ սահմանված կարգով Ակունք համայնքի Զառ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային լսում: Նախատեսվող գործունեության իրականացումը հանրային քննարկման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի մակարդակը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
3. Թափոնների՝ ներառյալ վտանգավոր թափոնների կուտակումը, հեռացման ձևը, եղանակը, աղբավայրում տեղադրումն իրականացնել համապատասխան գործող իրավական ակտերին և համաձայնեցված տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
4. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել՝ համաձայնեցված Ակունք համայնքապետարանի հետ՝ ապահովելով բարեկարգման և կանաչապատման համար սահմանված նորմատիվային պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մոդուլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Զառ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան